5

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1681

«31» 10 2024 թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ԱԲԳԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ Համալսարան) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 30-ի գրությամբ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակից «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 2024 թվականի հոկտեմբերի 16-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

Հանդիսանալով Համալսարանի և «ԹԱԳՀԷՄ» ՍՊ ընկերության միջև սույն թվականի հուլիսի 26-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանման ղեկավար և պայմանագրի վերահսկողությունն իրականացնող անձ՝ տեղեկացնում եմ, որ «ԹԱԳՀԷՄ» ՍՊ ընկերության (այսուհետ Ընկերություն) կողմից մինչ օրս՝ 16.10.2024թ. պայմանագրային պարտավորությունները չեն իրականացվել:

«ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» պայմանագրի մատակարարման ժամանակացույց հավելվածում (Հավելված 2) սահմանված էր, որ Ընկերությունը թվով 20 հատ բազմաֆունկցոնիալ մահճակալը /HEALICOM HC209, HEALICOM MEDICAL EQUIPMENT CO.,LTD, HC209/ պետք է մատակարարեր պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում՝ մինչև 25.08.2024թ.: Սակայն մատակակարումները չիրականացնելու պատճառով՝ 05.09.2024թ. իմ կողմից ընկերությանը գրավոր տեղեկացվել է ուշացումների մասին, և տրվել 10 օրացույցային օր ողջամիտ ժամկետ մատակարարումներն իրականացնելու համար, և նշվել է, որ հակառակ դեպքում կկիրառվեն պայմանագրով ամրագրված դրույթները: Գրությանն ի պատասխան Ընկերությունը ներկայացրել է դիմում, որտեղ նշվում է, որ ստեղծվել է անկանխատեսելի իրավիճակ, ինչով պայմանավորված Ընկերությունը խնդրում է բազմաֆունկցիոնալ

մահճակալների մատակակաման ժամկետը երկարացնել ևս 30 օրացույցային օրով: Ընդառաջելով Ընկերության խնդրանքին՝ 09.09.2024թ.-ին Ընկերությանը գրավոր հայտնել եմ, որ ԵՊԲՀ-ն ընդառաջում է Ընկերությանը և բազմաֆունկցիոնալ մահճակալների մատակակարման վերջնաժամկետ է սահմանվում ս/թ հոկտեմբերի 7-ը, պայմանով, որ եթե մատակակարումները մինչ այդ չիրականացվեն, ապա ԵՊԲՀ-ի կողմից պայմանագիրը միակողմանիորեն կլուծվի:

Հաշվի առնելով այն փաստը, որ «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ին արդեն իսկ տրվել էր մատակակարումներն իրականացնելու համար ողջամիտ տասնօրյա ժամկետ, որից հետո հիմք ընդունելով Ընկերության կողմից նշված մատակարարման նոր վերջնաժամկետը՝ ևս 30 օրով մատակակարման ժամկետը երկարեցվել էր, այնուհետև մինչև 14.10.2024թ. որևէ մատակակարում այդպես էլ չէր իրականացվել, հիմք ընդունելով կողմերի միջև սույն թվականի հուլիսի 26-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2 պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ առաջարկում եմ միակողմանի լուծել պայմանագիրը:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 2024 թվականի հոկտեմբերի 30-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ Համալսարան) կարիքների համար 2024 թվականի հունիսի 14-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, որի հետ 2024 թվականի հուլիսի 26-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով գնման պայմանագիր:

Հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 16-ին «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված գրությունն առ այն, որ ապրանքի մատակարարման գործընթաց չի իրականացվել՝ Համալսարանը 2024 թվականի հոկտեմբերի 23-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է 2024 թվականի հուլիսի 26-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով պայմանագիրը թիվ 100 չափաբաժնի մասով: 2024 թվականի հոկտեմբերի 23-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին, նույն օրը ծանուցումը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Պատվիրատուի ղեկավարի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 24-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է մինչև 2024 թվականի հոկտեմբերի 29-ը ներառյալ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման մասին: Մինչև 2024 թվականի հոկտեմբերի 29-ը ներառյալ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանի «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 11500166513800 հաշվեհամարին փոխանցում չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում եմ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Գործի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Համալսարանի կարիքների համար 2024 թվականի հունիսի 14-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն:

2. Համալսարանի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հուլիսի 26-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով գնման պայմանագիր:

3. 2024 թվականի հոկտեմբերի 16-ին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվել է գրություն առ այն, որ Պատվիրատուն Կողմերի միջև կնքված պայմանագրի արդյունավետ կառավարման նպատակով ձեռնարկել է հնարավոր և անհնար բոլոր միջոցները, մինչդեռ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են պայմանագրով ամրագրված 1.1-րդ, 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.4-րդ դրույթները, ինչը հանգեցրել է Ընկերության կողմից պայմանագրի էականորեն խախտմանը, ուստի առաջարկվել է միակողմանի ամբողջությամբ լուծել 2024 թվականի հուլիսի 26-ին կնքված «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով գնման պայմանագիրը:

4. 2024 թվականի հոկտեմբերի 23-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին:

5. 2024 թվականի հոկտեմբերի 24-ին որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման առաջարկի մասին պաշտոնապես ծանուցվելուց հետո «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյանս (այսուհետև՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագրերը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Համալսարանի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հուլիսի 26-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով գնման պայմանագիր: 2024 թվականի հոկտեմբերի 16-ին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվել է գրություն առ այն, որ Պատվիրատուն Կողմերի միջև կնքված պայմանագրի արդյունավետ կառավարման նպատակով ձեռնարկել է հնարավոր և անհնար բոլոր միջոցները, մինչդեռ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են պայմանագրով ամրագրված 1.1-րդ, 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.4-րդ դրույթները, ինչը հանգեցրել է Ընկերության կողմից պայմանագրի էականորեն խախտմանը, ուստի առաջարկվել է միակողմանի ամբողջությամբ լուծել 2024 թվականի հուլիսի 26-ին կնքված «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով գնման պայմանագիրը, ինչի արդյունքում թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծվել է: Որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման առաջարկի մասին պատշաճ ծանուցվելուց հետո «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի վճարել նշված ապահովումները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) պարբերության համաձայն՝

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է **պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից **պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Գնման ընթացակարգի հրավերի 8-րդ մասի 8.15-րդ կետի համաձայն՝

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող

քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Այսպիսով՝

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» ծածկագրով կնքված պայմանագիրի միակողմանի լուծման, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման առաջարկի մասին՝ սահմանված ժամկետում չի վճարել նշված ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրա	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	

			տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման՝ պայմանագիրը միակողմանի լուծեկու եղանակով	տուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը		
«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	01232586	ք.Երևան, Լենինգրադյան 31/7	-	X	-	31.10.2024թ. ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ՝ Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ